**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/12 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **20.03.2020թ.**

20.03.2020թթ., ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ խողովակների և փականների ձեռքբերման ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Բուդաղյան՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ,

Ջ. Մեհրաբյան՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի հաշվապահության բաժնի հաշվապահ,

Ա. Աթոյան՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի հաշվապահություն բաժնի հաշվետար գանձապահ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Բուդաղյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գնումների և նյութական ապահովման բաժնի պետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և իրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի մարտի 20-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի շենքում ժամը 12:00-ին Նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով գին սահմանված չէ՝ Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | երկաթե խողովակներ | - |
| 2. | երկաթե խողովակներ | - |
| 3. | պլաստմասե խողովակներ | - |
| 4. | երկաթե խողովակներ | - |
| 5. | պլաստմասե խողովակներ | - |
| 6. | երկաթե խողովակներ | - |
| 7. | երկաթե խողովակներ | - |
| 8. | երկաթե խողովակներ | - |
| 9. | պլաստմասե խողովակներ | - |
| 10. | երկաթե խողովակներ | - |
| 11. | երկաթե խողովակներ | - |
| 12. | երկաթե խողովակներ | - |
| 13. | երկաթե խողովակներ | - |
| 14. | երկաթե խողովակներ | - |
| 15. | պլաստմասե խողովակներ | - |
| 16. | երկաթե խողովակներ | - |
| 17. | երկաթե խողովակներ | - |
| 18. | երկաթե խողովակներ | - |
| 19. | երկաթե խողովակներ | - |
| 20. | փականներ | - |
| 21. | փականներ | - |
| 22. | փականներ | - |
| 23. | փականներ | - |
| 24. | փականներ | - |
| 25. | փականներ | - |
| 26. | փականներ | - |
| 27. | փականներ | - |
| 28. | փականներ | - |
| 29. | փականներ | - |
| 30. | փականներ | - |
| 31. | փականներ | - |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի

գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ հայտ պարունակող ծրար չի կազմել և չի ներկայացրել ոչ մի մասնակից:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Ա. Բուդաղյան |
| **Անդամներ** | | Ջ. Մեհրաբյան |
| | | Ա. Աթոյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |